**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան 26 ապրիլի 2019թ. ժ. 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հովհաննիսյան, Ա. Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

**I. Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| h/h | Անվանումը |
|---|---|
| 1 | Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ |
| 2 | Վեբ Ստուդիո Ուան ՍՊԸ |
| 3 | Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.
- համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին չէին համապատասխանում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, մասնավորապես՝ «Վեբ ստուդիո ուան» ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 1-ում սխալ էր գրված պատվիրատուի անունը, ինչպես նաև ընթացակարգի ծածկագիրը, իսկ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը (հավելված

N 3) չէր համապատասխանում հրավերով պահանջվող հայտարարությանը, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ հավելված 1-ում, ևս սխալ էր գրված պատվիրատուի անունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, մասնակիցներին տրվել է մեկ աշխատանքային օր՝ շտկելու անհամապատասխանությունը, և նրանք սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունը, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել նրանց կողմից ներկայացված հայտերը, իսկ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են, քանի որ ներկայացված էին հրավերի պահանջներին անհամապատասխան. բոլոր փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, ընթացակարգի ծածկագիրը սխալ էր գրված: Վեբեքս Թեքնոլոջիս ՍՊԸ-ին չի տրվել շտկման հնարավորություն, քանի որ գնային առաջարկը շտկման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

4. Մասնակցի կողմից առաջարկված գինը.

| - | Չափաբաժնի անվանումը | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Վեբ Ստուդիո Ոան ՍՊԸ | Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ | Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ | Նախահաշվային արժեք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵԲ ԿԱՅՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1320000 | 4000000 | 9800000 | ------ |

5. Ընդունել ի գիտություն, որ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա առաջին տեղ է զբաղեցրել Վեբ Ստուդիո Ոան ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հրավերի վերաբերյալ եղել է հարցում և օրենքով սահմանված ժամկետում եղել է պատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն գնային առաջարկների բացման նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահատման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել, որպեսզի եռօրյա ժամկետում ներկայացնի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Մ. Խաչատրյան

Անդամներ՝ ____________ Հ. Հովհաննիսյան

____________ Ա. Հայրապետյան

Քարտուղար՝ ____________ Լ. Մանուչարյան